

բժշկուած, եւ այս այն վայրկեանն, որ քրմուհին գուշակեր էր թէ դարձեալ պիտի տեսներ իր սրտին սիրելին: Տնցուեցաւ ելաւ, հանեց զգեստներն ու զէնքերը, կապեց գլխուն վրայ եւ առանց ուշ գնելու Երասխայ մռնչիւններուն եւ բարկացայտ յարձակմանց նետուի ցաւ մէջ, եւ նորա ընթացքին հետ կը սրանար, կ'իջներ միշտ հանդէպ կողմը, մինչեւ որ ափունքը գտաւ, եւ երբ վրայէն ջուրը ցնցեց, իր պարեգօտը դարձեալ հագաւ եւ ուղղուեցաւ դէպի նոյն վանքը, որ իբրեւ թէ մագնիսական զօրութեամբ առ ինքն կը ձգեր, վասնզի Վասկանուշի համար բանտին յիշատակը նաեւ քաղցր էր, եւ նոյն միջոցին մտածութիւն չի կար մտքին մէջ այլ միայն Վասկանուշ, վասնզի այս սիրոյ հսկայ ուրուականին առջեւ ամէն բան ազգ, Սասուն, արաբ, նախարար, կաթողիկոս, անհետացեր էր մտքէն, այս մտածութեամբք երբ կ'անցներ առաջին գիւղին քովին, երկու պա տանիք իրեն մօտենալով եւ ակնածութեամբ, իրար երեսու նայելէ եւ աչքով խորհրդակցելէ վերջ, մին աւելի համարձակ հարցուց.

– Եղբայր, խութեցի Յովնան դո՞ւ ես: – Այո, որդեակ, ես եմ:

– Ինդրեմ մեզ հետ գալ, վասնզի տունը մարդ մը քեզ կսպասէ:

– Լաւ՛, որդեակ, պատասխանեց Յովնան քիչ մը մտածելէն վերջ եւ առանց հետաքրքրութեան նշան կերպարանքին վրայ ցոյց տալու, Լռիկ սկսաւ երթալ պատանուոյն հետ, որու միւս ընկերը միշտ պատկառանք իրեն կը հետեւեր:

Եւ երբ պատանին դռան մը առջեւ կեցաւ, մտաւ Յովնան եւ առաջին աչք նետելուն տեսաւ Գուրգէն թիկնաւետ, որ դէպ իրեն քայլելով.

– Ե՛կ,– ըսաւ,– եղբայր, հազիւ թէ իմացայ քեզի եղած այն վատթար եւ յիմար ընդունելութիւնը, սիրտս տրոփեց եւ վախելով, որ առանց քեզ տեսնելու ձեռաց կը հանեմ եւ դու կ'երթաս Տարօն, բոլոր սա գետեզրը գիւղացուոց ապսպրեցի, որպէսզի տեսնուինք եւ եթէ կարելի բան մի կայ՝ գործ դնենք: